ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «20» հոկտեմբերի, 2015 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 31 Ա/Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պարգևների ձևերը և շնորհման կարգը հաստատելու մասին» N 27-Ա/Ք հրամանով հաստատված հավելվածի 2-րդ, 5-րդ, 6-րդ և 8-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետև՝ ՀԱԱՀ) 85-ամյակի կապակցությամբ՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀԱԱՀ ռեկտոր, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Արշալույս Պողոսի Թարվերդյանին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի «Ոսկե մեդալ»՝ հիմնարար և կիրառական գիտությունների բնագավառում արդիական խնդիրների հետազոտություններում ձեռքբերումների, գիտական կադրերի պատրաստման և գիտության ոլորտի զարգացման գործում ունեցած ավանդի ու ներդրումների համար:

2. ՀԱԱՀ ներքոհիշյալ աշխատակիցներին շնորհել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի պատվոգրեր՝ գիտության և տեխնիկայի բնագավառում

ունեցած ձեռքբերումների և գիտության ոլորտում երկարամյա բարեխիղճ աշխատանքի համար.

Շավարշ Մացակի Գրիգորյան	գյուղատնտեսության մեքենայացման և ավտոմոբիլային տրանսպորտի գիտահետազոտական ինստիտուտի դաշտավարության մեքենայացման բաժնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Աստղիկ Զավենի Փեփոյան	պարենամթերքի տեխնոլոգիաների սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիաների ինստիտուտի, սննդի անվտանգության և կենսատեխնոլոգիայի բաժնի վարիչ, կենսաբանական գիտությունների դոկտոր
Ալեքսանդր Փայլակի Ենգոյան	բույսերի պաշտպանության և պեստիցիդների սինթեզի լաբորատորիայի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գայանե Հրանտի Մելյան	Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոնի փոխտնօրեն, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
Մարգարիտա Գուրգենի Հարությունյան	բույսերի գենոֆոնդի և սելեկցիայի պրոբլեմային լաբորատորիայի առաջատար գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար Լ. Մարդոյանին:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ